Սիւլէյման-Գումբէդի Ջուրն ևս կանցնի Մալխաս և Խանոյ գիւղերու միջից, կը խառնուի Շոշկայ Ջրին։ Այս Ջրի վերայ գիւղեր շատ կան։

Շոշիկ գիւղէ մի ժամ խոնարհ Շոշկայ Ջրին կը-խառնուի Կովատուդարի գիւղի մօտէն իջնող Ջուրն, նոյն անունով, որ Արճիշու սարերէն կիջնայ։

Շոշկէն 1 ժամ խոնարհ Ծաղկոտն գաւառի ամենամեծ գիւղն է Խաչէու և Ղարա-Սէյտալի, ուստի հոսող Ջուրն Մալխասի Ջուր ևս կասուի։

Աղա-Դեվէքներու Ջուրն Ղարա-Ղանտիլ (սև սար կամ սև կանթեղ) լեռնէն կիջնայ. $^1/_2$ ժամ խոնարհ Օվարկներ աջ կողմ կը թողու, աստի 1 $^1/_2$ ժամ խոնարհ Աղա-Դէվէ նոյնպէս աջ կողմն, աստի ևս Կեվրէ-կեավը 2 ժամէն Ջրի ձախ կողմն թողլով, 1 ժամէն ևս Շորվերան, որ Ջրի ձախն է և 1 $^1/_2$ ժամ ևս հոսելով կը խառնուի Պորճի-Մասուրայ տակ Մալխասայ Ջրին և ուստի կը հոսի ի Մուրատ։

Ծաղկոտն գաւառի հիւսիսն և Մուրատի ձախ ափի վերայ իրարու յարևելս գտնուած գիւղօրայք, որք մէկ դծի վերայ մի մի ժամ հեռաւորութեամբ կերևին։

1, Քուփղռան (կարաս կոտրող)՝ որ Գարա-Քիլիսէէ $^3/_4$ ժամ հարաւ, Մուրատի ուղղակի ձախ ափին վերայ 60 տուն ք. բնակիչ ունի։

2, Ջըմքան, յարևելս Քուփղռանայ 22 տուն ք. բ. հանդէպ Եօնճալու հայ գիւղի։

3, Ղազարի գիւղ՝ յարևելս Ջմքանայ, հանդէպ Ղազի գիւղի 50 տուն ք. բնակիչ։

4, Սոֆեան՝ յարևելս Ղազարի գիւղի և հանդէպ Ձիրոյ հայ գիւղի՝ 70 տուն ք. բնակիչ։

5, Կեառկեառ՝ (խուլեր) յարևելս Սոֆեանայ,